# Հայ գրականության օլիմպիադայի հարցաշարեր
# Մարզային փուլ (2023-2024 ուստարի)
# (տևողությունը՝ 180 րոպե)
# 12-րդ դասարան

1. Գեղամ Սարյանի բանաստեղծական աշխարհը։ Վերլուծի՛ր «Մայրամուտի ժամանակ» բանաստեղծությունը։

Մայրամուտի ժամանակ արևը թույլ է լինում,
Հողմերը ծույլ են լինում մայրամուտի ժամանակ,
Ամպերը հուր են լինում, հանդերը լուռ են լինում ,
Կանչերը զուր են լինում մայրամուտի ժամանակ։

Մայրամուտի ժամանակ արևն անցնում է , գնում,
Մի այլ աշխարհ է գնում մայրամուտի ժամանակ,
Հեռվում կապույտ, լռակյաց միայն մի սար է մնում,
Անհուն խավար է մնում մայրամուտի ժամանակ։ 5 մ.

2. Հրանտ Մաթևոսյանի « Ծմակուտի» անխառն բնակչի կերպարը՝ ի դեմս Սիմոնի։ Բացահայտի՛ր հերոսի հոգու տվայտանքները։ 5 մ.

3. Վերծանի՛ր կորսված ծննդավայրի աղոթքը Վահագն Դավթյանի «Թե հրաշքով…» բանաստեղծությունում։

Թե հրաշքով ճամփաս տանի դեպի Եփրատ ու մանկություն
Հոտոտելով քեզ կգտնեմ, հայրենական իմ փոքրիկ տուն։
Այն կապույտից ու այն ոսկուց, որ ջրերին են թառում,
Կճանաչեմ ու կգտնեմ իմ մանկության ոսկե առուն։
Հազարի մեջ կճանաչեմ իմ մանկության բարակ բարդին,
Որ խշշում էր երկինքն ի վեր, երկինքն առած իր սաղարթին։
Եվ օդի մեջ,ոլորտի մեջ, հովերի մեջ լուսաբացի
Եսկգտնեմ բույրերը տաք մեր տան ծխի ու մեր հացի։ 5 մ.

4. Ներկայացրո՛ւ Պարույր Սևակի բանաստեղծական աշխարհը։ Վերլուծի՛ր քո նախընտրած 2 բանաստեղծություն։ 5 մ.

Հաջողությո՛ւն, սիրելի մասնակից։

**Հանրապետական հանձնաժողովի նախագահ՝ Ս. Աբազյան**